Հաստատված է

ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի 2015 թ.-ի հոկտեմբերի 31- ի նիստում

ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդի նախագահ՝

_____Ս. Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

ԵՊՀ Իջևանի մասնաճյուղում ուսանողների գնահատման գործընթացի վերաբերյալ հարցման

1. Ընդհանուր դրույթներ

1.1. ԵՊՀ ԻՄ-ում ուսանողների գնահատման գործընթացի արդյունավետության վերաբերյալ հարցման (այսուհետև՝ հարցման) կանոնակարգը սահմանում է ուսանողների և դասախոսական կազմի շրջանում իրականացվող հարցման անցկացման, արդյունքների մշակման և օգտագործման կարգը:

1.2. Հարցումն անց է կացվում «Կրթության մասին» ՀՀ օրենքի, ԵՊՀ ԻՄ-ի կանոնադրության, ԵՊՀ Որակի ապահովման հայեցակարգի, ԵՊՀ ԻՄ կրթական ծրագրերի ընթացիկ մոնիթորինգի (մշտադիտարկման) և պարբերական վերանայման կարգի հիման վրա, ՌԾ-ի պահանջներին համապատասխան և համարվում է ԵՊՀ ԻՄ-ում ըստ կրթական վերջնարդյունքների ուսանողների գնահատման գործընթացի որակի բարելավման գործառույթ:

1.3. Հարցման անցկացման նպատակն է տեղեկատվության հավաքագրման և մշակման միջոցով բարելավել ուսանողների գիտելիքների, հմտությունների և կարողությունների գնահատման գործընթացի իրականացման ձևերի, չափանիշների, մեթոդների, գնահատման օբյեկտիվության և ուսանողի ցուցաբերած արդյունքների լիարժեք արտացոլման հնարավորությունը:

2. Հարցման անցկացումը

2.1. Հարցումն իրականացվում է մասնաճյուղի ուսանողների և պրոֆեսորադասախոսական անձնակազմի շրջանում:

2.2. Հարցումն իրականացվում է յուրաքանչյուր տարվա ապրիլ ամսին:

2.3. Հարցումն անցկացվում է մասնաճյուղի ուսումնամեթոդական վարչության կողմից:

2.4. Հարցումն անցկացվում է ուսանողների և դասախոսների համար նախատեսված առանձին հարցաթերթերով (տե՛ս հավելված 1, հավելված 2):

2.5. Հարցումն անանուն է և անց է կացվում թղթային եղանակով:

3. Հարցման արդյունքների մշակումը և պահպանումը

3.1. Հարցման արդյունքները մշակվում, վերլուծվում և պահպանվում են ուսումնամեթոդական վարչությունում:

3.2. Հարցման արդյունքները ներկայացվում են յուրաքանչյուր հարցապնդման պատասխանի համար հաշվարկված գնահատականների միջին թվաբանականով, միջին քառակուսային շեղումով[1] և ստացած յուրաքանչյուր գնահատականի քանակով:

3.3. Հարցաթերթերն ունեն. կարծիքի բաժին, որտեղ ընտրման միջոցով ուսանողները և դասախոսները նշում են գնահատման գործընթացի կազմակերպման առաջարկվող ձևերից իրենց նախընտրելի տարբերակը, առաջարկությունների բաժին, որոնց արդյունքները մշակվում և ներկայացվում են գնահատման բարելավմանը միտված ընդհանրացված առաջարկությունների տեսքով:

3.4. Հարցման արդյունքների մշակումն ու վերլուծությունը կատարվում է մեկամսյա ժամկետում:

3.3. Հարցաթերթում գնահատականների ուղղումները չեն հաշվարկվում:

3.4. Գնահատման հարցաթերթերը և վերլուծությունները պահվում են 5 տարի:

4. Հարցման արդյունքների օգտագործումը

[1] Միջին քառակուսային շեղումը ցույց է տալիս գնահատումների շեղման չափը միջին թվաբանականից, այսինքն գնահատման մասնակիցների միջև փոխհամաձայնության աստիճանը: Որքան մեծ է միջին քառակուսային շեղումը, այնքան հարցման մասնակիցների անհատական գնահատումներն ավելի լայն տիրույթում են ցրված:

4.1. Հարցման արդյունքները և վերլուծությունները ուսումնամեթոդական վարչության պետը քննարկում է որակի կառավարման հանձնաժողովի, մասնագիտական կրթության որակի ապահովման բաժնի ու ֆակուլտետների դեկանների հետ և մշակում ուսանողների կրթական վերջնարդյունքների գնահատման գործընթացի արդյունավետության բարձրացմանն ուղղված առաջարկությունների փաթեթ:

4.2. Ֆակուլտետների դեկանները մեկամսյա ժամկետում ֆակուլտետում կազմակերպում են առաջարկությունների փաթեթի քննարկում, մշակում իրենց առաջարկները և ներկայացնում ՈՒՄՎ:

4.3. ՈՒՄՎ-ն դեկանների առաջարկությունների հիման վրա մշակում է բարելավման գործողություններ և ներկայացնում ֆակուլտետի ԳԽ-ի հաստատմանը, որտեղ նշվում են դրանց իրականցման ժամկետները և պատասխանատուները:

4.4. Հարցման արդյունքների վերաբերյալ տեղեկատվությունը հրապարակվում է Մասնաճյուղի պաշտոնական կայք էջում:

5. Կարգի հաստատումը և նրանում փոփոխությունների իրականացումը

5.1. Սույն կանոնակարգը հաաստատում է մասնաճյուղի գիտական խորհուրդը:

5.2. Կանոնակարգում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել մասնաճյուղի.

5.2.1. տնօրենի,

5.2.2. գիտական խորհրդի անդամների

5.2.2. որակի կառավարման հանձնաժողովի առաջարկությամբ՝ գիտական խորհրդի որոշմամբ:

Հավելված 1.

ԵՊՀ Իջևանի մասնաճյուղում ուսանողների գնահատման վերաբերյալ

Դասախոսական հարցում-2015

Սիրելի՛ դասախոսներ, ԵՊՀ Իջևանի մասնաճյուղը կարևորում է ձեր կարծիքը և վստահեցնում, որ ձեր անկեղծ ու օբյեկտիվ պատասխանները կօգնեն բարելավելու գնահատման գործընթացը մասնաճյուղում: Հետազոտությունն անանուն է, և ստացված տվյալները կօգտագործվեն միայն ընդհանրացված տեսքով:

Խնդրում ենք լրացնել հարցաթերթը և.

- գնահատել 5 միավորանոց սանդղակով, որտեղ 5-ը ամենաբարձր, 2-ը ամենացածր գնահատականն է, իսկ 1-ը՝ դժվարանում եմ պատասխանել,
- ընտրել «այո» կամ «ոչ» պատասխաններից մեկը:

Պաշտոնը_____ Գիտ.ասիճանը _____

Ֆակուլտետը _____

Տարիքը _____ Ստաժը ԵՊՀ ԻՄ-ում _____

I. Ուսանողի կրթական վերջնարդյունքների գնահատման չափանիշները

Թիվ	*Հարց*	*Պատասխան*
1	Ե՞րբ եք ուսանողին ներկայացնում ձեր դասընթացի կրթական վերջնարդյունքների գնահատման չափանիշները /ընդգծել միայն մեկ տարբերակ/:	• կիսամյակի սկզբում, • ընթացիկ քննությունից կամ ստուգումից առաջ, • եզրափակիչ քննությունից առաջ, • յուրաքանչյուր քննական գործընթացից առաջ, • կիսամյակի սկզբում և յուրաքանչյուր քննական գործընթացից առաջ, • չեմ ներկայացրել ընդհանրապես:
2	Լինու՞մ են արդյոք գնահատման չափանիշների փոփոխության առաջարկներ ուսանողների կողմից:	**այո ոչ**
3	Կատարե՞լ եք արդյոք գնահատման չափանիշների փոփոխություն ուսանողների առաջարկով:	**այո ոչ**
4	Կարողանու՞մ եք պահպանել Ձեր սահմանած գնահատման չափանիշները:	**այո ոչ**
5	Գնահատման համակարգում մասնակցությունների միավորի ներառումը նպաստու՞մ է արդյոք դասընթացին ուսանողի ներգրավվածությանը:	**այո ոչ**

II.Ուսանողի կրթական վերջնարդյունքների գնահատման ձևերն ու նրանց արդյունավետությունը

Թիվ	*Հարց*	*Պատասխան*
1	Ուսանողների գնահատման ինչպիսի՞ բազմագործոն ձևեր եք կիրառում /ընդգծել տարբերակները/.	**թեստ** **ստուգողական աշխատանքներ** **բանավոր հարցումներ** **տնային առաջադրանքներ** **ինքնուրույն աշխատանքներ** **ռեֆերատներ** **այլ.....**

2	Եթե օգտագործում եք թեստեր, ապա ի՞նչ կառուցվածքի /ընդգծել տարբերակները/.	միայն ընտրովի պատասխաններով առաջադրանքներով ընտրովի պատասխաններով և բաց հարցերով, բաց հարցերով այլ .....

Թիվ	*Հարց*	*Գնահատական*
3	Որքանո՞վ է ուսանողների գնահատման բազմագործոն համակարգը նպաստում. բանավոր խոսքի զարգացմանը	
4	գրավոր խոսքի զարգացմանը	
5	ձեռք բերած տեսական գիտելիքների բացահայտմանը	
6	գործնական հմտությունների դրսևորմանը	
7	կարողությունների դրսևորմանը	
8	Որքանո՞վ է արդարացված եզրափակիչ բանավոր քննությանը հատկացված 10 միավորը:	
9	Որքանո՞վ է եզրափակիչ բանավոր քննությունը բացահայտում ուսանողի ձեռք բերած. գիտելիքները	
10	հմտությունները	
11	կարողությունները	
12	Որքանո՞վ է թեստային համակարգը բացահայտում ուսանողի ձեռք բերած. գիտելիքները	
13	հմտությունները	
14	կարողությունները	
15	Որքանո՞վ են միջանկյալ քննությունները և ստուգումներն օգնում ուսանողին դասընթացի ավելի հեշտ յուրացմանը:	

III. Ուսանողների գնահատման օբյեկտիվությունն ու թափանցիկությունը

Թիվ	*Հարցը*	*Գնահատական*
1	Որքանո՞վ է ուսանողների գնահատման բազմագործոն համակարգը. բարձրացնում գնահատման օբյեկտիվությունը	
2	ապահովում գնահատման թափանցիկությունը	
3	բացառում գրագողությունը	
4	Որքանո՞վ է թեստերի կիրառումը հնարավորություն տալիս խուսափել գրագողությունից:	
5	Որքանո՞վ է ռոտացիոն համակարգի կիրառումը նպաստում ազնիվ մրցակցությանը:	

Թիվ	*Հարց*	*Պատասխան*
6	Ուսանողին հայտնի՞ է, թե քննական գործընթացի ժամանակ ինչպես է ձևավորվում նրա միավորը:	այո ոչ

7	Հիմնավորու՞մ եք արդյոք ուսանողի ձեռք բերած միավորը:	այո ոչ
8	Արձագանքու՞մ եք ուսանողների բողոքարկումներին:	այո ոչ
9	Ուսանողի բողոքարկման արդյունքում կատարե՞լ եք արդյոք ուսանողի միավորի փոփոխություն:	այո ոչ

IV.Ուսանողների գնահատման առաջարկվող ձևերից որոնք եք նախընտրում.

Թիվ	*Գնահատման ձևը*	*Նշում*
1	Միջանկյալ և եզրափակիչ բանավոր քննություններ	☐
2	Միջանկյալ գրավոր և եզրափակիչ բանավոր քննություններ	☐
3	Միջանկյալ և եզրափակիչ գրավոր քննություններ	☐
4	Միայն կիսամյակի վերջում բանավոր քննություն	☐
5	Միջանկյալ թեստային և եզրափակիչ բանավոր քննություններ	☐
6	Համակարգչային թեստավորում և գնահատում	☐
7	Այլ առաջարկներ	

V.Նշեք մասնաճյուղում իրականացվող ուսանողների գնահատման գործընթացի.

երեք ուժեղ կողմերը, որոնք արժե պահպանել.

1.

2.

3.

երեք վատ կողմերը, որոնցից պետք է հրաժարվել.

1.

2.

3.

Հավելված 2.

ԵՊՀ Իջևանի մասնաճյուղում ուսանողների գնահատման վերաբերյալ

Ուսանողական հարցում-2015

Սիրելի՛ ուսանողներ, ԵՊՀ Իջևանի մասնաճյուղը կարևորում է ձեր կարծիքը և վստահեցնում, որ ձեր անկեղծ ու օբյեկտիվ պատասխանները կօգնեն բարելավելու գնահատման գործընթացը մասնաճյուղում: Հետազոտությունն անանուն է, և ստացված տվյալները կօգտագործվեն միայն ընդհանրացված տեսքով:

Խնդրում ենք լրացնել հարցաթերթը և.

- գնահատել 5 միավորանոց սանդղակով, որտեղ 5-ը ամենաբարձր, 2-ը ամենացածր գնահատականն է, իսկ 1-ը՝ դժվարանում եմ պատասխանել,
- ընտրել «այո» կամ «ոչ» պատասխաններից մեկը:

Մասնագիտությունը _____

Ուսուցման ձևը (առկա, հեռակա) _____

II. Ուսանողի կրթական վերջնարդյունքների գնահատման չափանիշները

Թիվ	Հարցը	*Պատասխան*
1	Գիտեք, թե ի՞նչ են ուսանողի կրթական վերջնարդյունքների գնահատման չափանիշները:	*այո* *ոչ*
2	Ե՞րբ են դասախոսները ձեզ ներկայացնում իրենց դասընթացների կրթական վերջնարդյունքների գնահատման չափանիշների մասին /ընդգծել տարբերակները/:	1. կիսամյակի սկզբում, 2. ընթացիկ քննությունից կամ ստուգումից առաջ, 3. եզրափակիչ քննությունից առաջ, 4. յուրաքանչյուր քննական գործընթացից առաջ, 5. կիսամյակի սկզբում և յուրաքանչյուր քննական գործընթացից առաջ, *6.* չեն ներկայացրել ընդհանրապես:
3	Ուսանողների առաջարկով դասախոսները կատարե՞լ են արդյոք գնահատման չափանիշների փոփոխություն:	այո ոչ
4	Պահպանու՞մ են արդյոք դասախոսներն իրենց սահմանած գնահատման չափանիշները:	այո ոչ
5	Գնահատման համակարգում մասնակցությունների միավորի ներառումը նպաստու՞մ է արդյոք դասընթացին ձեր ներգրավվածությանը:	այո ոչ

II.Ուսանողի կրթական վերջնարդյունքների գնահատման ձևերն ու նրանց արդյունավետությունը

Թիվ	*Հարց*	*Պատասխան*
1	Ուսանողների գնահատման ինչպիսի՞ բազմագործոն ձևեր են կիրառում դասախոսները /ընդգծել տարբերակները/.	թեստեր ստուգողական աշխատանքներ բանավոր հարցումներ տնային առաջադրանքներ ինքնուրույն աշխատանքներ

		ռեֆերատներ այլ.....
2	Եթե դասախոսները կիրառում են թեստեր, ապա ի՞նչ կառուցվածքի թեստեր /ընդգծել տարբերակները/.	միայն ընտրովի պատասխաններով, առաջադրանքներով, ընտրովի պատասխաններով և բաց հարցերով, բաց հարցերով, այլ .....

Թիվ	*Հարց*	Գնահատական
3	Որքանո՞վ է ուսանողների գնահատման բազմագործոն համակարգը նպաստում Ձեր. բանավոր խոսքի զարգացմանը	
4	գրավոր խոսքի զարգացմանը	
5	ձեռք բերած տեսական գիտելիքների բացահայտմանը	
6	գործնական հմտությունների դրսևորմանը	
7	կարողությունների դրսևորմանը	
8	Որքանո՞վ է արդարացված եզրափակիչ բանավոր քննությանը հատկացված 10 միավորը:	
9	Որքանո՞վ է եզրափակիչ բանավոր քննությունը բացահայտում Ձեր ձեռք բերած. գիտելիքները	
10	հմտությունները	
11	կարողությունները	
12	Որքանո՞վ է թեստային համակարգը բացահայտում Ձեր ձեռք բերած. գիտելիքները	
13	հմտությունները	
14	կարողությունները	
15	Որքանո՞վ են միջանկյալ քննությունները և ստուգումները Ձեզ օգնում դասընթացի ավելի հեշտ յուրացմանը:	
16	Որքանո՞վ են Ձեր ստացած միավորներն արտացոլում ձեր իրական ձեռքբերումները:	

III. Ուսանողների գնահատման օբյեկտիվությունն ու թափանցիկությունը

Թիվ	Հարց	Գնահատական
1	Որքանո՞վ է ուսանողների գնահատման բազմագործոն համակարգը. բարձրացնում գնահատման օբյեկտիվությունը	
2	ապահովում գնահատման թափանցիկությունը	
3	բացառում գրագողությունը	
4	Որքանո՞վ է թեստերի կիրառումը հնարավորություն տալիս խուսափել գրագողությունից:	
5	Որքանո՞վ է ռոտացիոն համակարգի կիրառումը նպաստում ազնիվ մրցակցությանը:	

Թիվ	Հարց	Պատասխան
6	Ձեզ հայտնի՞ է, թե քննական գործընթացի ժամանակ ինչպես է ձևավորվում ձեր միավորը:	այո ոչ

7	Դասախոսը հիմնավորու՞մ է արդյոք Ձեր ձեռք բերած միավորը:	այո ոչ
8	Դասախոսներն արձագանքու՞մ են Ձեր բողոքարկումներին:	այո ոչ
9	Ուսանողի բողոքարկման արդյունքում դասախոսները կատարե՞լ են արդյոք ուսանողի միավորի փոփոխություն:	այո ոչ

IV.Ուսանողների գնահատման առաջարկվող ձևերից որոնք եք նախընտրում.

Թիվ	Գնահատման ձևը	Նշում
1.	Միջանկյալ և եզրափակիչ բանավոր քննություններ	☐
2.	Միջանկյալ գրավոր և եզրափակիչ բանավոր քննություններ	☐
3.	Միջանկյալ և եզրափակիչ գրավոր քննություններ	☐
4.	Միայն կիսամյակի վերջում բանավոր քննություններ	☐
5.	Միջանկյալ թեստային և եզրափակիչ բանավոր քննություններ	☐
6.	Համակարգչային թեստավորում և գնահատում	☐
7.	Այլ առաջարկներ	

V.Նշեք մասնաճյուղում իրականացվող ուսանողների գնահատման գործընթացի.

երեք լավ կողմերը, որոնք արժե պահպանել. 1. 2. 3.
երեք վատ կողմերը, որոնցից պետք է հրաժարվել. 1. 2. 3.